



# ԱԶԱՏ ԽՕՄՔ

ՉՈՐԵ՜Շ ՇԱՐԹԻ 15 ՕԳՈՍՏ. 1906. ԱԼԵԲՍԱՆԴՐԻԱ

ՆՈՐԸՆՏԻՐ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ  
ԴԱՏԱՍՏԱՆԸ

Արտասոսվոր ատեանին առջև

Ինչպէս յայտնի է Հանրային Կարծիքին բողոքներու վրայ՝ Ընդհանուր Դատախազը վստահութեան զեղծումի ամբաստանութեամբ դատ բացած է Ալեքսանդրիոյ նորընտիր հայ Երեսփոխանական ժողովին ղէմ: Սոյն դատին առաջին նիստը անգի ունեցաւ օգոստոս 12 կիրակի օրը, այս առթիւ յատկապէս կազմուած արտասոսվոր ատեանին առջև:

Ահաւասիկ սոյն հետաքրքրական դատին պաշտօնական ատենագրութիւնը:

Նախագահ.- Ամբաստանեալ, ոտք ելիր.

Ամբաստանեալ.- Չեմ կրնար, ոտքիս մէկը Ջուրջերիս գացած է:

Նախագահ.- Բայց կը տեսնեմ որ զլուխ ալ չունիս:

Ամբաստանեալ.- Գլուխս ֆարլսպատ գացած է օղափոխութեան:

Նախագահ.- Լաւ. ի՞նչ է անունդ:

Ամբաստանեալ.- Գաւառային Երեսփոխանական Ժողով:

նախագահ.- Քանի տարեկան ես  
ամբաստանեալ.- Երկու ամսու:

նախագահ.- Ուրեմն տակաւին կաթ կ'ուտես:

Վկայ մը.- Կաթ մի... ժամպօն ալ կ'ուտէ, սալա-  
մի ալ կ'ուտէ, սոսիսոն ալ կ'ուտէ, ձուկ, հաւկիթ,  
պանիր, ղէթին, սարտէրա ալ կուտէ...

Ուրիշ վկայ մը.- Գինի, գարեջուր ալ կը խմէ...

աղքատախնամին անտուկը.- Այն, տէր նախագահ,  
կը հաստատեմ վկաներուն ըսածը. զեռ կէս մը ծնած  
էր երբ մէկ օսկիի քան կերաւ:

նախագահ.- Դուն ինչպէս զիտես:

աղքատախնամին անտուկը.- Մեզայ, փարաները  
ես ցնծացի նէ...

նախագահ.- անցնինք. ուր կը բնակիս:

ամբաստանեալ.- Քիչ մը ժամանակ առաջնորդա-  
րանին մէջ բնակեցայ. յետոյ օր մըն ալ զիս զուրո  
նետեցին անկէ, ատեն մը ծառերուն տակ ժամանակ  
անցուցի, իսկ հիմակ որ և է սրճարանի մը անկիւնը  
կը նստիմ, եթէ սրճարանին տէրը գիտողութիւն չընէ:

Ընդհանուր դատախազ.- Կը խնդրեմ, տէր նա-  
խագահ, որ յատկապէս ուշադրութիւն դարձնէք ամ-  
բաստանեալին այս յայտարարութեան վրայ որ իր՝ ա-  
ռանց որոշ բնակարանի՝ թափառաչրջիկ մը ըլլալը կը  
հաստատէ:

նախագահ.- Այդ կէտը ուշադրութեան անուամ  
է. ամբաստանեալ, ձեռքդ երկնցուր և երգում ըրէ որ  
ճշմարտութիւնը, միմիայն ճշմարտութիւնը պիտի  
խօսիս:

ամբաստանեալ.- Ձեմ կարող:

նախագահ.- Ինչպէս չես կարող:

ամբաստանեալ.- Ձեմ կարող որովհետեւ աջ թեւ

այս միջոցիս քաջակայ է և ձախ թև ալ հրաժարած է մարմնոյս մասը կազմել:

Նախագահ.- Այս ինչ յաւապար Երեսփոխանական ժողով ես եզեր դուն ինչ որ է անցնիլքս Արդ, Հանրային Կարծիքին կողմէ ամբաստանուած ես իբրև ժողովրդին վստահութիւնը չարաչար գործածող. ինչ պիտի քոես պաշտպանութեանդ համար:

ամբաստանեալ.- Կը բողոքեմ այդ ամբաստանութեան դէմ: Ես ժողովրդին ջերմ բարեկամն եմ և զինքը երբէք չեմ խարած:

Ժողովուրդ.- Պարոն, երկու անգամ վստահութիւնը չարաչար գործածեցիր:

Նախագահ.- Ինչպէս երկու անգամ:

Ժողովուրդ.- Անշուշտ, տէր նախագահ, որովհետև այս պարոնը որ հիմակ հոս ներկայացած է Գաւառական Երեսփոխանական ժողով անունով, քանի մը տարի առաջ ալ Թաղական Խորհուրդ անունին տակ նոյն խաղերը խաղաց ինձի:

Նախագահ.- Ինչպէս, պարոն ամբաստանեալ, երկու անուն կը գործածես. որն է ուրեմն ճշմարիտ անունդ, այսինքն՝ աւազանի, մկրտութեան անունդ:

ամբաստանեալ.- Քանի մը տարի առաջ Թաղական Խորհուրդ անունով մկրտուեցայ, բայց տեսնելով որ անկէ խեր մը չկրցայ տեսնիլ, այս անգամ նորէն աւազան մտայ և Երեսփոխանական ժողով անունով դուրս ելայ մէջէն:

Ընդհանուր դատախազ.- Ատեանդ անշուշտ նկատողութեան պիտի առնէ ամբաստանեալին այս ծանրակշիռ յայտարարութիւնը որ իր ուղղամտութեան աստիճանը ցոյց կուտայ:

ամբաստանեալ.- Կը բողոքեմ ընդհանուր դատա-

խազին խօսքերուն դէմ: Եւ միշտ ուղղամտութեամբ  
չարժամ եմ և ամէն ատեն յանուն սկզբունքի գործ  
տեսամ:

Սկզբունք.- (Նստած տեղէն) Այո՛, այո՛, շատ էիշտ  
կը խօսի, միշտ իմ անունովս գործ տեսամ է:

Ընդհանուր դատարար.- Այսինքն՝ քու անունովդ  
իր խաղերը խաղացած է:

ամբաստանեալ.- Կը բողոքեմ.

Սկզբունք.- Ես ալ կը բողոքեմ: միշտ ուղղամտ-  
տութեամբ շարժած է:

Նախագահ.- Ինչո՞ւ այդ աստիճան շերմօրէն կը  
պաշտպանես ամբաստանեալը:

Սկզբունք.- (միշտ նստած տեղէն) Ինչ ըսել է  
եղբայր հնք մենք. այսչափ տարի է միասին գործած  
ենք:

Հանրային Կարծիք.- Կը խնդրեմ, ազի՛ր նախագահ,  
հրաման ըրէք պարոնին որ նստած տեղէն ելլէ ատեա-  
նին առջև գայ և հոն տայ իր վկայութիւնը:

Սկզբունք.- Ես հոս հանգիստ եմ:

Հանրային Կարծիք.- Այո՛, բայց մութը մնացեր  
ես, երեսդ չենք տեսներ կոր:

Ընդհանուր դատարար.- Տէր նախագահ կը պա-  
հանջեմ որ պ. Սկզբունքը ատեանիդ առջև կոչէք:

Նախագահ.- Հրամանեցէք ատեան պ. Սկզբունք:

(9. Սկզբունքը կը վարանի, բայց տեսնելով որ  
անկարելի է գիմարել, երկու ձեռքերով երեսը ծած-  
կած կը յառաջանայ և կուգայ կը կայնի ամբաստան-  
եալին քով):

Նախագահ.- 9. Սկզբունք երեսդ ինչո՞ւ կը ծածկես:

Սկզբունք.- Մութէն մէկէն ի մէկ լոյսին ելայ նէ՛  
աչքերս շացան:

Նախագահ.- Վար առ ձեռքերդ

Սկզբունք.- անկարելի է:

Նախագահ.- (Ուզը բարապաններուն ուղղելով).-

Վար առ էք պարոնին ձեռքերը:

(Բարապանները կը ժօռնան պ. Սկզբունքին և բոնի ձեռքերը վար իջեցնել կուտան դէմքին վրայէն).  
Նախագահը (զարմացական ճիչ մը արձակելով).-  
Աս ի՞նչ կը նշանակէ, դիմակ անցուցեր ես դէմքիդ վրայ:

Սկզբունք (չփոթած).- Դիմակ չէ, տէր նախագահ, դէմքիս վրայ չի պան հաննցի տէ՛ր բժիշկը ըսաւ որ այսպէս եսխը մը փակցունեմ:

Նախագահ.- Որչափ ատեն է ի վեր այսպէս կը պարտիս:

Սկզբունք.- Բանի մը ամիս կայ:

Վկայ մը.- Սուտ է, տէր նախագահ, վեց տարի է այդպէս երեսը ծածկած է դիմակով:

Նախագահ (բարապաններուն).- Վար առ էք սա դիմակը:

(Բարապանները կը գործադրեն նախագահին հրամանը և ահա կը տեսնուի որ իբրև Սկզբունք ներշնչողը պարզապէս Անձնականութիւնն է:

Նախագահ (բարկացած).- Ի՞նչ խնդրութիւն է սա. անձնականութիւնն ես եղեր դուն և ո՛չ պ. Սկզբունքը:  
Փողովուրդ.- Վնջ խաբեբայ. վեց տարի է որ մեր քիթին կը խնդայ կոր, ի՛հ...:

Նախագահ.- Պարոն ամբաստանեալ, ի՞նչ կ'ըսես այս յայտնութեան. ուրեմն ինչ որ դուն յանուն ըսկզբունքի կ'ըսես ու կը գործես, պարզապէս յանուն անձնականութիւնն է եղեր:

ամբաստանեալ (այլայլած).- Ծջմարիտը, տէր նա-

խազան, կարծեմ թիրիմացութիւն մը կ'յ գործին՝  
մէջ, ես, հաւատալէք, երբէք ժողովուրդը խաբելու  
գիտաւորութիւն չեմ ունեցած... միայն թէ, զարմա-  
նալի բան, ես ալ չեմ գիտեր ինչպէս բացատրեմ...

Նախազան (խիստ կերպով մը).- Լո՛ւ է դուն առ այժ-  
ժըմ. իսկ դուն կեղծ պարոն Սկզբունք ճշմարիտ ա-  
նունովդ ներկայացիր ատեանին:

Անձնականութիւն.- Ահաւախիկ եմ, տէր:

Նախազան.- Ինչո՞ւ համար վեց տարիէ ի վեր ըն-  
կըզբունքի զիմտին տակ կը գործես:

Անձնականութիւն.- Եթէ բուն անունովս մէջտեղ  
իյնայի մարդ երեսս չէր նայեր:

Նախազան.- Ամբաստանեալը գիտէր քու կեղծիքդ:

Անձնականութիւն.- Ի՞նչ ըսել է, անիկա զիմակը  
երեսս անցուց և պինդ մըն ալ կապեց:

Նախազան.- Ի՞նչ էր ձեր նպատակը:

Անձնականութիւն.- Քանի մը անձերու հաշիւնե-  
րուն ծառայել:

Նախազան.- Եւ ատիկա անպատկառօրէն կը խոս-  
տովանիս,

Անձնականութիւն.- Ես միշտ անկեղծ եղած եմ,  
նոյնիսկ կեղծաւորութեան մէջ ալ:

Նախազան.- ամբաստանեալ, ի՞նչ պիտի պատա-  
խանես:

Ամբաստանեալ.- Ե՛ս... իրաւ որ չեմ գիտեր, թո՛ղ  
փաստարանս իմ կողմէս խօսի, նայինք մէջէն ինչ-  
պէ՞զ պիտի ելլէ:

Փաստարան.- Նկատելով որ ժամանակը բաւական  
անցած է և թէ իմ պաշտպանողականս բաւական եր-  
կար պիտի տևէ, կ'առաջարկեմ որ այսօր այսչափը  
բաւական համարինք և դատաւարութեան շարունա-

կութիւնը յաջորդ կիրակիին թողունք:

Նախագահ (Խօսքը ընդհանուր դասախաղին ուղղելով).- Իրողութիւն մը ունիք պ. փաստաբանին առաջարկութեան դէմ:

Ընդհանուր Դատախաղ.- Ո՛հ:

Նախագահ.- Ուրիմն ատեանը փակուած է և դատին շարունակութիւնը յաջորդ շաբթուան թողուած: Հանրային կարծիք.- Շաբաթ մըն ալ վաստըլեյան: Ժողովուրդ.- Է՛հ, տէ՛սէկտէ՛ն տէ՛սէէ էօմիւր տիր:



### ԽՕՍՔԻ ՇԱՐՈՅ

Եւ այսքան միայն...

Ոմանք իրենց ձեռակերտ մարմինները չորս ոտքով աւանակ մը շինելու տեղ երկու ոտքով մարդու փոխած էին, որովհետեւ երկու ոտքի շամուրը պահեսբ էր և որոնցմէ սերեցան ապագային համար էշեր, որոնք միայն երկու ոտք ունենալնուն համար մարդ եղած էին:

Ահա ասոր վրայ էր որ մարէշալը սրանեղած հրբաման ըրաւ որ չուտով շամուր հասցնեն վաղեցին ընէչպէրները շամուրի, ոմանք ալ ածապարանօք շամուրի տեղ կաւ բերին, ոմանք ալ կողովներով բամբակի Այս անգամ ալ յինուած մարդիկները փոխանակ կատարեալ մարդ ըլլալու, կաւախառն և բամբակախառն մարդեր ստեղծուեցան որոնցմէ սերած են այսօրուան շատ մը կաւէ... և բամբակ... մարդիկը:

Եւ գեռ ո՞վ գիտէ տակաւին Շ. Ր. Տ. էֆէին պէս ի՛նչ պամպարակ մարդիկներ և կենդանիներ պիտի յառաջ գային, եթէ յանկարծ Որ էն պապային հրեղէն

կառքերուն զդրդագին և որոտընդոստ գնառքին ահ-  
ռելի ձայները մեր ըմբոստ բանակին սխրագործու-  
թեանց վերջ մը չգնէին:

Եւ ահաւասիկ ևրևցաւ Որ էն պապան, մէկ կող-  
մը ունենալով Ադամ աղան և միւս կողմը Եւայ հա-  
նըմը: Երեսէն յայտնի էր որ բաւախան բարկացած էր  
և իմացած էր որ իրմէն քիչ զօրութիւն գողցած էին  
ինչպէս իր որդին այ հասկցաւ որ իրեն մարդ մը զի-  
պաւ և քիչ մը զօրութիւն տարաւ:

- Ի՞նչ կընէք այդտեղ, գոչեց սարսափելի և խռո-  
պոտ ձայնով մը:

- Կաշխատինք պապա, ըսաւ մարէշալը:

- Մարդ կը շինենք կոր, ձայնեց ատենապետը:

- Քեզի օգնելու համար պսկաս ձգածներդ կը  
րացունենք կոր, խօսեցաւ ատենագլխիբը:

- Արհեստական փորձեր կ'ընենք կոր, փափաց  
օգնականը:

- Ըսելէ ապստամբութիւն ինծի գէմ...

- Մարդիկ հաւասար են բողոքեցին պարոնաք  
Ն. Զ. Ր. Պ. Կ. և իրենց բամբիչաք՝ տիկին Կ. Դ. Ն.-  
թեան: Այսպէս գրած է Քարլը Մարքս, այսպէս քա-  
րողած է Էնկէլս. այդպէս խօսած է Պէպէր:

- Այո, աշխատութեան բաժանում գ'ուզենք ըստ  
ապակեդրոնայման գրութեան, պոռաց անդիէն ներք-  
նասահմանի պետը՝ պարոն Ավոամաչի:

- Ի՞նչ ըսել է, մինակ Դու պիտի վայելես ամէն  
բան, գոչեցին գաղտնի գործողութեանց տեղեկալնե-  
րէն պարոնայք Փափաք և Զոյգ հոտօշ:

Իսկ Արչակաւանի փոխ նահանգապետ կամ տնօ-  
րէն պարոն Թ. Շ. Կ. Խորեց ամէնքին մէջտեղը կեցէր,  
իւրաքանչիւրին՝ «այո՛, իրաւունք ունիք, կողուցէ՛ք»

Վրտէր բերնովը և ձեռքովը ալ ամէնուն գրպանը կը վը խառնէր բան մը թոցնելու համար.

- Վերջապէս «կորսուեցէ՛ք» պողոսաց պապա Որ էն և հրաման ըրաւ Սերովբէներուն ու Բէրովբէներուն սր արքայութեան ու զրախտին սահմաններէն զուրս արտաքսեն այդ ըմբոստ բանակը և հալածեն մինչև իրենց շինած Մրատ աշխարհքին կամ որ նոյնն է Մուրակին սահմանները: Ասկէց զատ մարէշալը իշ բուր աատիճաններէն ու պատիւներէն զրկեց և ցկեանս բերդարգելութեան զատապարտեց և անունը Բէհեղ-գեբուղ դրաւ: Ատենազպիրը մեղմացուցիչ պարագաներու բերմամբ Սողոմ Գոմորի կառավարիչ անուանեց: Քարտուղարը՝ որ առաջ հրեշտակ էր, տակը հանեց և միայն հրէշ մը ձգեց և Սողոմ Գոմորի կառավարչութեան քարտուղարութիւնը յանձնեց: Պարոն Թ. Շ. Կ. Նորեցն ալ անխժեց և ըսաւ որ կեանքին մինչև վերջը կեղծաւորութեամբ, պողութեամբ, մուրացկանութեամբ և պնակալիզութեամբ, պնակ չգրտնայ նէ, որը գտնայ ան լիզութեամբ ապրի:

Եւ անա փողերը հնչեցին. պահապան հրեշտակները իրենց Գարբէլ և Միքայէլ առաջնորդներով, Սերովբէներով ու Բէրովբէներով իրենց սուրերը և ամէն բաները մերկացուցին և ինկան ապստամբներուն ետեկն ու առջևէն պաշարեցին և առանց սեռի ու հասակի խտրութեան հրեցին ու հրեցին, քչեցին ու քըչեցին մինչև սր ամբողջ արքայութիւնը մաքրեցին լուացին ու իրենք ալ հանգստացան:

Բայց այս ամէն իրարանցումին ու յեղափոխութեան մէջ բան մը զարձաւ որ ամէնուն ուշադրութենէն վրիպեցաւ:

Մարէշալը կամ Բեհեղգեբուղը, գլխիկոր ծառի մը

կրթնած գործին վախճանին կը սպասէր թէ ինչ եւք՝  
պիտի ունենայ, երբ տեսաւ որ դրախաւէն գուրս կար-  
տաքսուին ու Ադամ Եւան ալ ուրտի գուարթ գիւ-  
կընդխառն Որ էն պապաին մէկ քովիկը կեցեր կը  
դիտէին եղելութիւնը անմեղօրէն ու պարզաւնակ,  
լոյս մը ծագեցաւ միաքին մէջ ու քաղճութեան խառ-  
նիճաղանճէն օգտուելով, մէկէն մատնին լզեց ու խո-  
շոր ճանճի մը կեղպարանափոխուելով Եւային մազե-  
րուն մէջ պահուիւ մտածեց. բայց երբ Եւան կըտըկ  
ըլլալուն համար քը՛շթ ըգաւ, այն ատեն նորէն մատ-  
նին լզեց ու այս անգամ ալ երկան բարակ բան մը  
եղաւ որուն անունը օձ կոչեց ետքը Եւան, ու սողոս-  
կելով քնաց պահուեցաւ ծառերուն չոր տերկներուն  
տակը:

Այս հանդիսաւոր արարողութիւնը և տեսարանը  
լմենալէն յետոյ Որ էնին մէկ նշանին վրայ ամէնքը  
քաշուեցան իրենց տեղերը և միայն մնացին Ադամ ու  
Եւայ: Ասոնց թաթիկներէն բոնեց դրախտին չորս կող-  
մը պըտըտցուց ու երբ գեղեցկատեսիլ ու հովասուն  
վայր մը եկան, հիանալի ու լեզուով աննկարագրելի  
ու գրիչով անմեկնելի տեղ մը. հոս կեցաւ ու Որ էն  
պապան Ադամ ու Եւային դառնալով ըսաւ. սիրելի  
ձեռնասուններս, ինչ բան որ կը տեսնէք այս պարտէ-  
ղին մէջ ու ձեր ճաշակին հաճելի է. բոյս ըլլայ, պը-  
տուղ ըլլայ, դեղին ըլլայ, կանանչ ըլլայ, թթու ըլլայ,  
անուշ ըլլայ, կերէք խմեցէք, քէֆերնիդ նայեցէք ու  
բերաննիդ սբւելով մէկ կողմ քաշուեցէք. բայց սա  
չար ու բարին և ամէն բան իր մէջը պարունակող  
ծառին պտուղէն մի ուտէք, բիս բան է, վերջը գուր  
գրտէք, ձեզ ալ կը պատժեմ:

Այս ըսելէն ետքը ինքը հեռացաւ և երկուքը միս

մենակ մնացին ու միայն հետաքրքիր այդ ծառին պը-  
տուղին կը նայէին, կը շօշափէին: Կը հոտուըտային,  
կը լզուըտային, բայց ուտելու կը վտիմային:

Մարէշալը որ օձի փոխակերպուած էր կամացուկ  
մը սողոսկելով ծառին վրայ ելաւ և գլուխը տնկելով  
ձայնեց Աղամին ու Եւային.

- Ի՞նչ ապուշի պէս կեցեր իրարու կը նայիք. Որ  
էն պապան ձեզի չուտելու պատուէր տուած և բիս  
բան է ըսած այդ պտուղը, բայց ընդհակառակը շատ  
համով բան է. եթէ մէկ անգամ ուտէք, աչքերնիդ բո-  
լորովին կը բացուի, ամէն բան կը գիտնաք ու ճիշդ  
իրեն պէս կ'ըլլաք: Տէ մի անտնաք, ըրէք, ինչ պիտի  
ընէք նէ շուտ ըրէք, կերէք որ աշխարհիս վրայ համը  
ինչ բան է նէ հասկնաք, - ըսաւ ու ուտուլիկով մը ծա-  
ռէն սահնցաւ իջաւ ու աներևոյթ եղաւ:

Ասոր վրայ Աղամ ու Եւայ ծառին տակը չոքեցան  
ու խորհրդակցութեան մտան ինչ ընելիքնին որոշելու  
համար.

S. M.

### ՃՇՄԱՐՏԱՆԻՄԱՆ

Եւ եղաւ որ Ալեքսանդրիոյ հայ վաճառա-  
կաններեն մէկը, ծխախոտի վաճառական հաւա-  
նօրէն, պէտք ունեցաւ պատանիի մը որ քիչ մը  
հաշիւ, քիչ մը հայերէն, քիչ մը Ֆրանսերէն և  
պուտիկ մըն ալ ուղղադրութիւն գիտնայ:

Վաճառականը գիմեց քանի մը բարեկամ  
ներու, որոնցմէ մին առտու մը իրեն ներկայա-

ցուց Պօղոսեան վարժարանէն ելած ուսումնաւարտ մը:

- Տղա՛ս, ըսաւ վաճառականը իր ամենէն հայրական բարեացակամութեամբը, տօմարակալութիւն գիտե՞ս:

- Ո՛չ, պատասխանեց պատանին արի ու անկեղծ համարձակութեամբ մը, դպրոցական ծրագրին մէջ տօմարակալութեան դաս չի կար:

- Տղա՛ս, շարունակեց վաճառականը, հայերէն շարագրութիւն գիտե՞ս:

- Ո՛չ պատասխանեց պատանին, հայերէն շարագրութեան դասագիրքերը տակաւին Պօլսէն չէին հասած երբ ես շրջանս աւարտեցի:

- Ապրի՛ս զաւակս, ըսաւ մարդը, ֆրանսերէն նամակի պարզ հասցէ մը կրնա՞ս գրել:

- Ո՛չ, ըսաւ ուսումնաւարտը, բայց կրնամ կարգալ՝ եթէ գիրը հատիկ հատիկ և մաքուր գրուած ըլլայ:

- Կեցցե՛ս որդեակ իմ, առաջ ասրաւ վաճառականը, ուղղագրութեան մէջ ինչպե՞ս ես, սանկ պղտիկ նամակ մը գրելու համար:

- Ուղղագրութեան դասատունիս, բացառեց քանտիտան, վերջին ամիսներուն մարմնամարզի դասին կոչուեցաւ. ուստի քանի մը ամիս դաս չառինք և այդ միջոցին...

- Շատ լաւ, զաւակս, ըսաւ վաճառականը, ըսէ՛ տեսնենք ի՞նչ գիտես ուրեմն:

~ Երկրպագութիւն գիտեմ, պատասխանեց  
միամիտ պատանին, երկրպագութիւն՝ իր ամէն  
ճիւղերովք, շապիկաւոր և անշապիկ, կիրակի  
օրուան և լուր օրերու յատուկ երկրպագութիւն,  
ինչպէս նաև երկրպագութիւն Զատիկի և Մնչն-  
գի համար, ու երկրպագութիւն վասն տաղա-  
ւարայ:

Եւ որովհետև վաճառականը այլևս չպա-  
տասխանեց ու գլուխը ծռեց գրասեղանին վը-  
րայ, պատանին երկրպագութիւն մը ըրաւ և  
զուրս ելաւ :

Ս Ե Ն Ա Յ Ո Ս Ա Ն Ո Յ  
ՌՈՄԳՐԱՎԱՆ ԵՒ ՏՊԱԳՐԱՎԱՆ ԱՅՈՒՏՈՒԹԵԱՆ  
Գ. ՆԱԶԱՐԻԲՆԱՆ  
ԻՅՐԱՅՐԻՑ  
Կառայել է Թիֆլիս Երոզ. Գաղտնիքի Թիֆ. Թիֆ.  
1880 թ. ԿՈՒՆԱ  
15 RUE STAMBOUL 15  
ALEXANDRIE

Այս ախտաւորին մէջ եր գտարաւ ին Գր-  
գրէն և կրկն ցուր Ոչ-ուր, Գաղտն. Գրգրէն,  
Գրգրու Երկրորդ, արտ-ը և արիւ մտերմաներ,  
Թափանք են. Զինկերթի և Կալանդար-Թիֆ  
մերտերեայ գրքեր:

Յարմանան ամէն անկ գրքեր անց և արտ  
նշաններ, Զարմանան Կրտսերներ, Կայա-  
գրաներ, Կառուկայիներ, Կառուկայիներ, Կառու-  
կայիներ, Կառուկայիներ, Կառուկայիներ, Կառու-  
կայիներ Թիֆլիս Երոզ. Գաղտնիքի Թիֆ. Թիֆ.  
Կառուկայի Թիֆլիս Երոզ. Գաղտնիքի Թիֆ. Թիֆ.  
Կառուկայի Թիֆլիս Երոզ. Գաղտնիքի Թիֆ. Թիֆ.

Այս ախտաւորը լեզուով եր յանձնարարեց  
Ազգանշանի, Կառուկայի և Գրգր. Կառուկայի  
գրքեր, վասնիցնորք թէ ան կայմ ցուր յանձնա-  
րարութիւննոր անձնան Թիֆլիսի եր Կառու-  
կայի և ցուր եր կայմ ամէն վաճառական Կա-  
ռուկայի

Սուր գրքաւորներու գրքիլ անոյ կառուկայ  
անկոր մը արեւել ան ախտաւոր:

ԹԵՐԹԻԿ

Սոյն օրաթերթը կա-  
նոնաւորապէս կը հրա-  
տարակուի ամէն առա-  
ւօտ և կը պարունակէ ա-  
մէն ընթերցողի մատչելի  
լուրեր ընթացիկ կեանքի  
մասին ինչպէս նաև հետա-  
քրքրաշարժ թերթն մը  
Բաժնեգիրն է Եգիտոսի  
մէջ, Աղեքսանդրիա, վե-  
ցամանայ՝ 60 դ. ո. ամսա-  
կան՝ 10 դ. ո. Գահիրէ, վե-  
ցամանայ՝ 60, ամսկն՝ 12:  
Արտասահմն. վեցամս. 80:

ԲԱՌՔ

Ոճիրը յարգն իսկ է, ըսած է Պուֆօն:

Ճշմարտութիւնը ինչո՞ւ կը բռնաբարուի  
միշտ :

- Որովհետեւ մերկ է և գեղեցիկ...

Նախագահը դատարկացորտ ամբաստան-  
եալի մը կը հարցնէր խստութեամբ.

- Արհեստով ի՞նչ ես...

- Փամավաճառ, տէր նախագահ:

Որո՞նք են խաբուած ամուսնոյ ամէնէն ա-  
ւելի ահաւոր և միանգամայն ողբալի զէն-  
քերը:

- Իր կոտորչները, բարէ:

Ո՞վ է այն որ միշտ մահացու կերպով կը  
վիրաւորուի և չի մեռնիր սակայն:

- Արժանապատուութիւնը:

Մէն Կէն

**ԽՆԴԻՐՔԻ ՉԵՒՈՎ ՊԱՀԱՆՁՔ ՄԸ**

Կրկին կը խնդրենք մեր գաւառի բաժա-  
նորդներէն որ բարեհաճին կարճ միջոցի մը  
մէջ իրենց բաժնեդիւնները մանաւ-բոստով կամ  
թէ մար բոստի կերպարանքով մեզի հասցնել:

«ԱԶԱՏ ԽՕՄՔ» ՉԵՒՔԻ ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻ

Ալեքսանդրիա՝ Տ. Յ. Ղազիկեանի քով և Շէրիֆ  
Փաշա լրագրավաճառ Տ. Թեղլալեանի խանութք:

Գահիրէ՝ լրագրավաճառ Տ. Հաւնկի և Կոլտըն Բէտչ-  
քի քով և «Էռուսաբեր» թերթի ցրուիչին մօտ:

Նախորդ շաբթուան թիւերը կը վաճառուին կըր-  
կին գինով:

**New Victoria Hotel ՍԱՆ ՍԹԷՅԱՆՕ**

ՆՈՐ ՎԻՔԹՈՒՌՆԻ ՕՐԻՆ Ալեքսանդրիոյ Մօտ  
ՅՈՒՆԻՍԻ ՄԷՁ ԲԱՑՈՒՍԾ Հալթ թիւ 2

Առաջին կարգի օթել, մասնաւորապէս շինուած,  
այժմու բոլոր հանգստաւէտութեան պայմաններով:  
Հիւանալի ճաշարան, սալօն, ծխարան: Մասնաւոր  
ճաշարան: Ընդարձակ պատաշգամ և պարտէզ: Ելեքտր-  
րական լոյս: ՉՍՓԱԽՈՐ ԳԻՆ: Թեղեֆօն թիւ 370: Հե-  
ռագրական հասցէ՝ Նիւ Վիքթորիա, Ռամլէ: Թոսամվա-  
յով տասը վայրկեան Ալեքսանդրիայէն:

Ս. Յ. ՌԷՉԻԿ, ՏՆՕՐԷՆ

Յ. Գ.--Մասնաւոր գին կառավարական պաշտօն-  
աներու և զինուորականներու համար: Բոլոր սեն-  
և ակնեմը ծովուն վրայ կը նային:

“ԱԶԱՏ ԽՕՍՔ” ի Պալատննէ ըջ

- ԱԶԱՏ ԽՕՍՔ - ԿԸ ՇՐԱՅԱՐԱԿՈՒՒ ԵՄԱՅ ՁՐԵՐԸ  
ԵԳԻՊՏՈՍԻ ԿԱՄԱՐ ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

40 ԹԻԻԸ                      40 ՂՐԸ. ՈՂԶ  
20                                      20                                      ”                                      ”

Ա Ր Տ Ս Ս Ս Ղ Մ Ա Ն

ԵՒՐՈՊԱ	40	ԲԻԻ	10	ՖՐԱՂՔ
ՌՈՒՍԻ	”	”	4	ՐՈՒՊԼԻ
ԱՄԵՐԻԿԱ	”	”	2	ՏՈԼԱՐ

Բաժանորդագրութիւնը կանխիկ  
ՀԱՏԸ 1 ՂՐԸ. ՈՂԶ

“ԱԶԱՏ ԽՕՍՔ” ի համար բաժնեդին կալ  
որ և է գրութիւն պէտք է ուղղել չե-  
տեւեալ հասցէին՝

K. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE, ( EGYPT )

Ծանուցումներ կրնդունուին մասնաւոր  
պայտաններով:

Պատասխանատու. Խմբագիր Ե. ՕՏԵՍՆ

Տպգր. Փոքր. Գ ՆԱԶԱՐԵԹԵԱՆ Ալեքսանդրիա